



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՏԵՏՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Երևան, Կառավարական փուն 1

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

(Ա/Ձ Վարազդատ Դավթյանի 07.04.2017թ.-ի վարչական բողոքը  
բավարարելու մասին)

**Ք. ԵՐԵՎԱՆ**

**«10» մայիսի 2017թ.**

ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովը՝ ի դեմս ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի, ուսումնասիրելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Նոր Նորքի հարկային տեսչության 16.12.2016թ. թիվ 2131628 ստուգման ակտի և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 07.03.2017թ. թիվ 11/5 որոշման դեմ Ա/Ձ Վարազդատ Դավթյանի 07.04.2017թ.-ի վարչական բողոքը՝

## Պ Ա Ր Զ Ե Ց

### 1. Բողոքի էությունը և ներկայացված պահանջը.

Ա/Ձ Վարազդատ Դավթյանը (այսուհետ նաև՝ Բողոք բերած անձ) բողոք է ներկայացրել ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով (այսուհետ՝ նաև Հանձնաժողով)՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի հարկային տեսչության (այսուհետ նաև՝ Հարկային տեսչություն) 16.12.2016թ. թիվ 2131628 ստուգման ակտը (այսուհետ նաև՝ Ստուգման ակտ) և ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 07.03.2017թ. թիվ 11/5 որոշումն (այսուհետ նաև՝ Որոշում) անվավեր ճանաչելու վերաբերյալ:

Բողոքը մուտքագրվել է Հանձնաժողովի քարտուղարություն 07.04.2017թ.-ին:

Բողոք բերած անձը նշել է, որ Հարկային տեսչության պետ Վ. Սահակյանի կողմից 22.08.2016թ. տրված թիվ 2131628 հանձնարարագրի հիման վրա Հարկային տեսչության գլխավոր հարկային տեսուչ Արա Սարոյանի, հարկային տեսուչներ Գառնիկ Գևորգյանի և Կամո Վարդանյանի կողմից 2008թ. մայիսի 24-ից մինչև 2016թ. դեկտեմբերի 5-ն ընկած ժամանակահատվածում աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) ստուգում է իրականացվել անհատ ձեռնարկատեր Վարազդատ Դավթյանի մոտ:

Իրականացված ստուգմամբ հարկային տեսուչներն արձանագրել են, որ ՀՀ կառավարության 25.07.2013թ. թիվ 1259-Ն որոշմամբ հաստատված, ակտին կից և անբաժանելի մաս հանդիսացող թիվ 2 հավելվածում առկա անվանացանկի թվով 5 (հինգ) վարձու աշխատողներ՝ Իրինա Շիրինյանը (մենեջեր, աշխատել է 02.02.2011-01.11.2015թթ.), Արման Մնացականյանը (վարսավիր, աշխատել է 01.08.2012-11.11.2015թթ.), Լիանա Հակոբյանը (վարսավիր, աշխատել է 03.07.2012-15.11.2015թթ.), Ալինա Եդիգարյանը (մատնահարդար, աշխատել է 01.05.2011-01.11.2015թթ.) և Մարիա Բաղդասարյանը (վարսավիր, աշխատել է 14.04.2011-01.09.2015թթ.) աշխատել են անհատ ձեռնարկատեր Վարազդատ Դավթյանի վարսավիրանոցում (Երևան քաղաքի, Մոլդովական փողոցի 24/1 շենքի, թիվ 38 տարածքում), սակայն ձևակերպված չեն եղել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ բացակայում էին նրանց հետ կնքված գրավոր աշխատանքային պայմանագրերը կամ անհատական իրավական ակտերը: Ստուգման ակտով արձանագրվել է նաև, որ անհատ ձեռնարկատեր Վարազդատ Դավթյանի կողմից խախտվել են ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 14-րդ և 85-րդ հոդվածների պահանջները, ուստի համաձայն «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ կետի «բ» ենթակետի՝ յուրաքանչյուր չձևակերպված վարձու աշխատողի համար հաշվարկվում և վճարվում է եկամտային հարկ 150.000 ՀՀ դրամի չափով, եթե չձևակերպված աշխատողների քանակը չորսից վեցն է, հետևաբար վճարման ենթակա եկամտային հարկի չափը կազմել է 750.000 ՀՀ դրամ (5 աշխատող x 150.000 դրամ):

Ստուգման ակտը Բողոք բերած անձի կողմից բողոքարկվել է Գանգատարկման հանձնաժողովին, սակայն Գանգատարկման հանձնաժողովի 07.03.2017թ. թիվ 11/5 որոշմամբ գանգատը մերժվել է և Հարկային տեսչության 16.12.2016թ. թիվ 2131628 ակտը թողնվել է անփոփոխ:

Բողոք բերած անձը հայտնել է, որ հանդիսանում է անհատ ձեռնարկատեր և 2011թ. փետրվար ամսից իրականացրել է նաև վարսավիրական ծառայություններ: Սկզբում վարսավիրական ծառայություններն իրականացվել են ՀԴՄ կտրոններով, սակայն ավելի ուշ՝ հաստատագրված վճարներով:

Հարկային տեսչության պետի հանձնարարագրի համաձայն Բողոք բերած անձի մոտ 2014թ. դեկտեմբերի 5-ին իրականացված ստուգմամբ կայացված ստուգման թիվ 6103075 ակտով արձանագրվել է, որ վարսավիրանոցում առկա են երեք աթոռներ, սակայն գրանցված աշխատողները 2-ն են և նշանակվել է 80.000 ՀՀ դրամի չափով տուգանք՝ միայն աթոռի առկայության և ոչ թե չգրանցված աշխատողի համար: Բողոք բերած անձը պնդել է, որ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ նշված ստուգմամբ չգրանցված աշխատողներ չեն հայտնաբերվել, իսկ ինչ վերաբերում է երրորդ աթոռի առկայությանը, ապա դրա վրա աշխատող վարսավիր չի եղել:

Հետևաբար Բողոք բերած անձը պնդում է, որ նշված 5 անձանց գրավոր բացատրություններն անհիմն են ու կեղծ, դրանցից երեքը հայտարարել են, որ աշխատել են վարսավիրի մասնագիտությամբ այն դեպքում, երբ վարսավիրանոցում առկա են եղել ընդամենը 3 աթոռներ և 2 գրանցված վարսավիրներ, ինչն արձանագրվել է ստուգման թիվ 6103075 ակտով:

Բողոք բերած անձը նշում է, որ քանի որ երեք աթոռների պայմաններում տեխնիկապես հնարավոր չէր ունենալ 2 գրանցված և 3 չգրանցված վարսավիրներ, ապա ակնհայտ է, որ վերոհիշյալ 5 անձանց գրավոր բացատրություններն անհիմն են ու կեղծ, քանի որ վերջիններիս մատնանշած ժամանակահատվածում իրականացված ստուգմամբ որևէ չգրանցված աշխատող չի հայտնաբերվել և չէր էլ կարող հայտնաբերվել, քանի որ իրականում չի եղել:

Բողոք բերած անձը նշում է, որ Ստուգման ակտը կայացվել է բացառապես 5 անձանց գրավոր բացատրությունների հիման վրա՝ առանց այլ գրավոր ապացույցի: Վարչական մարմինը նշված բացատրություն ներկայացրած անձանցից չի ճշտել, թե արդյոք վերջիններս որևէ ապացույց ունեն իրենց հայտարարություններն ու դիմումները հիմնավորելու համար:

Բողոք բերած անձը նշել է նաև, որ 2015 թվականի ընթացքում նախկին կնոջ՝ Գայանե Ոսկանյանի հետ հարաբերությունները լարվել են և նոյեմբեր ամսին դիմել են ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ ամուսնալուծության և համատեղ

ամուսնական կյանքի ընթացքում ձեռք բերված գույքի բաժանման և մի շարք այլ պահանջներով: Բողոք բերած անձի կողմից վարսավիրական գործունեությունը դադարեցնելու մասին 11.11.2015թ. հարկային մարմնին գրավոր հայտարարություն տալուց հետո Գայանե Ոսկանյանը գրանցվել է որպես անհատ ձեռնարկատեր ու վարսավիրական ծառայություններ է մատուցում նույն հասցեում գործող վարսավիրանոցում: Բողոք բերած անձի պնդմամբ գրավոր բացատրություններ ներկայացրած բոլոր 5 անձինք իր նախկին կնոջ՝ Գայանե Ոսկանյանի մոտ գրանցված են որպես վարձու աշխատողներ, ուստի գրավոր բացատրությունները ներկայացրել են Գայանե Ոսկանյանի ցուցումով:

Բողոք բերած անձը նշում է, որ դիմում ներկայացրած անձանցից երկուսը՝ Նվարդ Թումանյանը և Սուսաննա Հարությունյանն արդեն իսկ հայտնել են դիմումի բովանդակությանն անձանոթ լինելու պայմաններում ստորագրելու մասին:

Բողոք բերած անձը մեջբերելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ և 63-րդ հոդվածները, նշում է, որ նշված իրավանորմերի բացառիկ և համակարգված վերլուծությամբ պետք է արձանագրել, որ Հարկային տեսչության և իր՝ որպես անհատ ձեռնարկատիրոջ հարաբերություններում, իրականացված վարչարարության և կայացված ստուգման ակտի օրինականության և հիմնավորվածության ապացուցման պարտականությունը կրում է Հարկային տեսչությունը, իսկ հայտարարություններ տված 5 անձանց և Հարկային տեսչության հարաբերություններում, աշխատելու, նրանց հետ աշխատանքային պայմանագիր կնքելու պահանջի և Բողոք բերած անձի կողմից՝ որպես անհատ ձեռնարկատեր այդ պահանջը մերժելու մասին փաստական հանգամանքների ապացուցման պարտականությունը կրում են նշված 5 անձինք: Մինչդեռ վարչական մարմինը Ստուգման ակտի կայացման համար որպես հիմք է ընդունել այդ 5 անձանց գրավոր բացատրությունները:

Վերոգրյալի հիման վրա Բողոք բերած անձը պնդել է, որ Ստուգման ակտը կայացվել է կեղծ հայտարարությունների հիման վրա, իսկ Գանգատարկման հանձնաժողովի որոշմամբ այն թողնվել է անփոփոխ, ուստի ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ, 63-րդ, 64-րդ, 75-րդ հոդվածներով, 76-րդ և 77-րդ հոդվածների 1-ին մասերով, Բողոք բերած անձը խնդրել է անվավեր ճանաչել Գանգատարկման հանձնաժողովի 07.03.2017թ. թիվ 11/5 որոշումը՝ Հարկային տեսչության 16.12.2016թ. թիվ 2131628 ակտն անփոփոխ

թողնելու մասով և անվավեր ճանաչել Հարկային տեսչության 16.12.2016թ. թիվ 2131628 ստուգման ակտը:

## **2. Մասնակցի դիրքորոշումը.**

Բողոք բերած անձի դիրքորոշումը հստակեցնելու նպատակով Հանձնաժողովը 2017թ. մայիսի 10-ին անցկացրել է լսումներ, որին ներկայացել էին Բողոք բերած անձ Վարազդատ Դավթյանը և լիազորված անձ Սարգիս Հովհաննիսյանը:

Ս. Հովհաննիսյանը լսումների ընթացքում պնդեց բողոքով ներկայացված պահանջը և դրա վերաբերյալ հիմնավորումները՝ ևս մեկ անգամ նշելով, որ ստուգման ակտը կայացվել է բացառապես 5 անձանց գրավոր բացատրությունների հիման վրա՝ առանց այլ գրավոր ապացույցի: Ընդ որում, դրանք տրվել են Ա/Ձ Վ. Դավթյանի նախկին կնոջ ցուցումով՝ հաշվի առնելով կնոջ մոտ նշված անձանց ձևակերպված աշխատող հանդիսանալու, հետևաբար՝ նյութական կախում ունենալու հանգամանքը:

## **3. Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

Բողոք բերած անձի և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գտնում ենք, որ սույն բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

- համաձայն անհատ ձեռնարկատիրոջ գրանցման թիվ 01Ա087714 վկայականի պատճենի, Վարազդատ Դավթյանը 04.10.2004թ. գրանցվել է որպես անհատ ձեռնարկատեր:

- Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչի 04.03.2016թ. որոշմամբ կարճվել է թիվ 17150116 քրեական գործով վարույթը, որն իրականացվել է Գայանե Ոսկանյանի հաղորդման հիման վրա այն մասին, որ իր նախկին ամուսին Վարազդատ Դավթյանը 2015թ. հոկտեմբեր ամսից սպառնացել է սպանել իրեն, իսկ 2015թ. դեկտեմբերի 16-ից այցելել է իր՝ Նոր Նորքի 2-րդ զանգվածի Մոլդովական փողոցի 24/1-38 հասցեում գեղեցկության սրահ ու կրկին տվել սպանության սպառնալիքներ:

- ամուսնալուծության թիվ ԱԲ 052296 վկայականի համաձայն, Վարազդատ Դավթյանը և Գայանե Ոսկանյանը ամուսնալուծվել են 27.03.2017թ.-ին:

- Ա/Ձ Վարազդատ Դավթյանի և Նվարդ Թումանյանի միջև 15.10.2011թ. կնքվել է անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագիր, համաձայն որի՝ աշխատողը պետք է մատուցի վարսավիրական ծառայություն:

- 2015թ. օգոստոսի 31-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության Քանաքեռ-Զեյթունի զբաղվածության տարածքային կենտրոնի, Ա/Ձ Վարազդատ Դավթյանի՝ որպես գործատուի և Մարիա Բաղդասարյանի՝ որպես շահառուի, միջև կնքվել է «Անմրցունակ անձի աշխատավարձը մասնակի փոխհատուցելու մասին» թիվ 04 պայմանագիրը, որի համաձայն, Ա/Ձ Վարազդատ Դավթյանը պարտավորվում է Մարիա Բաղդասարյանին ընդունել աշխատանքի, իսկ տարածքային կենտրոնը պարտավորվում է պայմանագրով սահմանված չափով և ժամկետում գործատուին տրամադրել աշխատավարձի մասնակի փոխհատուցում:

- Ըստ Ա/Ձ Գայանե Ոսկանյանի (հասցե՝ ք. Երևան, Մոլդովական 24/1, 38) 01.12.2015թ. թիվ 04/15 հրամանի, Իրինա Շիրինյանը 01.12.2015թ.-ից ընդունվել է աշխատանքի որպես մենեջեր:

- Ա/Ձ Գայանե Ոսկանյանի և Իրինա Շիրինյանի միջև 01.12.2015թ.-ին կնքվել է աշխատանքային պայմանագիր, համաձայն որի՝ աշխատողը պետք է կատարի կազմակերպչական աշխատանքներ գեղեցկության սրահում և զբաղվածության կենտրոնում՝ զբաղվելով երեխաների ուսուցմամբ:

- 11.11.2015թ. Ա/Ձ Վարազդատ Դավթյանը հայտարարություն է ներկայացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ Խորհրդային ՀՏ պետ Վ. Սահակյանին, համաձայն որի՝ Վարազդատ Դավթյանը դադարեցնում է վարսավիրական ծառայության գործունեությունը Մոլդովական 24/1-38 հասցե տարածքում:

- Քաղաքացիներ Սուսաննա Հարությունյանը, Գոհար Մակարյանը, Նվարդ Թումանյանը, Իրինա Շիրինյանը, Արման Մնացականյանը, Ալինա Եղիզարյանը, Մարիա Բաղդասարյանը և Լիաննա Հակոբյանը Հարկային տեսչության պետին հասցեագրել են դիմումներ, որոնցով հայտնել են, որ աշխատել են Վարազդատ Դավթյան Ա/Ձ-ում առանց համապատասխան ձևակերպումների և աշխատանքային պայմանագրի կնքման: Բազմաթիվ անգամներ պահանջել են Վարազդատ Դավթյանից, որպեսզի իրենց հետ կնքվեն աշխատանքային պայմանագրեր և որ իրենք ձևակերպվեն որպես օրինական աշխատողներ, սակայն Վարազդատ Դավթյանը մերժել է ներկայացված պահանջները՝

պատճառաբանելով, որ եթե կատարի աշխատանքային ձևակերպումներ, ապա ստիպված կլինի ամեն ամիս համապատասխան հարկեր վճարել պետական բյուջե, ինչն իրեն ձեռնտու չէ:

- Քաղաքացիներ Իրինա Շիրինյանը, Արման Մնացականյանը, Ալինա Եդիգարյանը, Մարիա Բաղդասարյանը և Լիաննա Հակոբյանը կրկին անգամ Հարկային տեսչության պետին հասցեագրել են դիմումներ, որոնցով հայտնել և հավաստել են, որ համապատասխանաբար 02.02.2011թ.ից մինչև 2015թ. նոյեմբեր, 01.08.2012թ.-ից մինչև 11.11.2015թ., 01.09.2011թ.-ից մինչև 2015թ. նոյեմբեր, 14.04.2011թ.-ից մինչև 01.09.2015թ. և 03.07.2012թ.-ից մինչև 11.11.2015թ. աշխատել են Վարազդատ Դավթյան Ա/Ձ-ում առանց համապատասխան ձևակերպումների և աշխատանքային պայմանագրի կնքման: Բազմաթիվ անգամներ պահանջել են Վարազդատ Դավթյանից, որպեսզի իրենց հետ կնքվեն աշխատանքային պայմանագրեր և որ իրենք ձևակերպվեն որպես օրինական աշխատողներ, սակայն Վարազդատ Դավթյանը մերժել է ներկայացված պահանջները՝ պատճառաբանելով, որ եթե կատարի աշխատանքային ձևակերպումներ, ապա ստիպված կլինի ամեն ամիս համապատասխան հարկեր վճարել պետական բյուջե, ինչն իրեն ձեռնտու չէ: Հայտնել են նաև, որ Վարազդատ Դավթյանը օգոստոս ամսից սկսած չի վճարել աշխատավարձերը:

- Մարիա Բաղդասարյանն ի լրումն 17.08.2016թ. դիմումի Հարկային տեսչության պետին ուղղել է ևս մեկ դիմում, որով հայտնել է, որ իր բազմաթիվ պահանջներից հետո 01.09.2015թ. Վարազդատ Դավթյանն իրեն գրանցել է որպես աշխատող և կատարել է համապատասխան ձևակերպում: Ըստ նշված դիմումի, աշխատողը չի ծանուցվել աշխատանքից ազատվելու մասին, վերջնահաշվարկ չի կատարվել և աշխատանքային գրքույկ չի տրվել: Խնդրել է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ պետի 22.08.2016թ. թիվ 2131628 հանձնարարագրի հիման վրա 26.08.2016թ.-ից մինչև 05.12.2016թ.-ը Ա/Ձ Վարազդատ Դավթյանի մոտ կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) ստուգում:

- 05.12.2016թ. ստուգումն իրականացնող աշխատողների կողմից ք. Երևան, Գյուրջյան 1/3 հասցեում գտնվող կահույքի արտադրամասում կազմվել է արձանագրություն՝ ի կատարումն ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ պետի 22.08.2016թ. թիվ

2131628 հանձնարարագրի: Դրանով արձանագրվել է, որ թվով 5 աշխատողների՝ Իրինա Շիրինյանի, Արման Մնացականյանի, Լիաննա Հակոբյանի, Ալինա Եդիգարյանի և Մարիա Բաղդասարյանի աշխատանքի ընդունումը գործատուի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված չէ (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտը կամ գրավոր պայմանագիրը բացակայում է):

- Բողոք բերած անձը 04.10.2016թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության իրավախախտումների հայտնաբերման և վերլուծության բաժնին է ներկայացրել հայտարարություն, որում նշել է. «.. 2010թ.-ից մինչև 2015թ. նոյեմբեր ամիսը ք. Երևան, Մոլդովական 24/1, 38 հասցեում որպես Ա/Ձ իրականացրել եմ վարսավիրական գործունեություն: Այդ ընթացքում ունեցել եմ 4 աշխատող՝ Նվարդ Թումանյանը, Մարիա Բաղդասարյանը, կինս՝ Գայանե Ոսկանյանը և Էվելինա Սուքիասյանը: Ինձ մոտ փաստացի աշխատել են միայն վերոնշյալ անձինք և հավաստիացնում եմ, որ երբևիցե չձևակերպված աշխատող չեմ ունեցել: 2015թ. նոյեմբեր ամսից նույն վայրում իր Ա/Ձ-ով սկսել է նույն գործունեությունը ծավալել կինս՝ Ա/Ձ Ոսկանյան Գայանեն: Նշեմ, որ ներկայումս ունենք կենցաղային լուրջ խնդիրներ, գտնվում ենք ապահարզանի գործընթացում և դրա հետ կապված նշեմ, որ քաղաքացիներ Իրինա Շիրինյանը, Սուսաննա Հարությունյանը, Արման Մնացականյանը, Գոհար Մակարյանը, Ալինա Եդիգարյանը, Լիաննա Հակոբյանը և նույնիսկ Նվարդ Թումանյանը և Մարիա Բաղդասարյանը, որոնք ինչպես արդեն նշեցի ինձ մոտ փաստացի ձևակերպված են եղել և ունեցել են աշխատանքային պայմանագրեր, հենց կնոջս դրդմամբ են դիմում-բողոք ներկայացրել Նոր Նորք ՀՏ»:

- Արման Մնացականյանը՝ 22.10.2016թ., Իրինա Շիրինյանը՝ 26.10.2016թ., Ալինա Եդիգարյանը՝ 26.10.2016թ. և Մարիա Բաղդասարյանը՝ 07.11.2016թ. ներկայացրել են հայտարարություններ ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման վարչության իրավախախտումների հայտնաբերման և վերլուծության բաժնի առ այն, որ Արման Մնացականյանը՝ 2012թ. օգոստոս ամսից, Իրինա Շիրինյանը՝ 2010 թվականից, Ալինա Եդիգարյանը՝ 2011 թվականից և Մարիա Բաղդասարյանը 2011թ. ապրիլ ամսից մինչև 2015 թվականն աշխատել են Ա/Ձ Վարազդատ Դավթյանի մոտ՝ վարսավիրանոցում, աշխատանքային գործունեության ողջ



Ժամանակահատվածում Վարազդատ Դավթյանը հրաժարվել է կնքել վերջիններիս հետ աշխատանքային պայմանագրեր: Նշված քաղաքացիներից Արման Մնացականյանի, Ալինա Եղիզարյանի և Իրինա Շիրինյանի կողմից նշվել է նաև, որ Վարազդատ Դավթյանը վերջիններիս չի վճարել 2015թ. օգոստոս, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների աշխատավարձը: Համաձայն Մարիա Բաղդասարյանի հայտարարության՝ իր բազմաթիվ պահանջների արդյունքում Ա/Ձ Վարազդատ Դավթյանն իր հետ 01.09.2015թ. կնքել է աշխատանքային պայմանագիր, սակայն նոյեմբեր ամսից չի վճարել իրեն հասանելիք աշխատավարձը:

Վերոհիշյալ հայտարարություններ կատարող անձանցից յուրաքանչյուրը հայտարարություն է կատարել նաև մյուսների աշխատելու վերաբերյալ:

- Ստուգման արդյունքում 16.12.2016թ. կազմվել է թիվ 2131628 ստուգման ակտը, որի 1-ին կետի համաձայն. «Ա/Ձ Վարազդատ Դավթյանի մոտ իրականացված ստուգման ընթացքում պարզվեց, որ ՀՀ կառավարության 25.07.2013թ. թիվ 1259-Ն որոշմամբ հաստատված, ակտին կից և անբաժանելի մաս հանդիսացող թիվ 2 հավելվածում առկա անվանացանկի թվով 5 (հինգ) վարձու աշխատողներ՝ Իրինա Շիրինյանը (մենեջեր, աշխատել է 02.02.2011-01.11.2015թթ.), Արման Մնացականյանը (վարսավիր, աշխատել է 01.08.2012-11.11.2015թթ.), Լիաննա Հակոբյանը (վարսավիր, աշխատել է 03.07.2012-15.11.2015թթ.), Ալինա Եղիզարյանը (մատնահարդար, աշխատել է 01.05.2011-01.11.2015թթ.) և Մարիա Բաղդասարյանը (վարսավիր, աշխատել է 14.04.2011-01.09.2015թթ.) աշխատել են անհատ ձեռնարկատեր Վարազդատ Դավթյանի վարսավիրանոցում (Երևան քաղաքի, Մոլդովական փողոցի 24/1 շենքի, թիվ 38 տարածքում), սակայն ձևակերպված չեն եղել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ բացակայում էր նրանց հետ կնքված գրավոր աշխատանքային պայմանագրերը կամ անհատական իրավական ակտերը (հայտարարությունները կցվում են): Գործատուի կողմից խախտվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ և 85-րդ հոդվածների պահանջները, ուստի համաձայն «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ կետի «բ» ենթակետի, այն է՝ աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի և (կամ) գրավոր պայմանագրի բացակայության) փաստը լիազոր մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով արձանագրվելու դեպքում

գործարուն (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցված և արտոնագրային վճար վճարող չհանդիսացող) փվյալ (արձանագրման) ամսում յուրաքանչյուր ձևակերպված վարձու աշխատողի համար հաշվարկում և վճարում է եկամտային հարկ՝ 150.000 ՀՀ դրամի չափով, եթե ձևակերպված աշխատողների քանակը չորսից վեցն է: Ընդամենը ենթակա է վճարման եկամտային հարկ՝ 750.000 դրամ (5աշխ. x 150.000 դրամ)»:

Ստուգման ակտի «ստացա մեկ օրինակը» մասում առկա է գրառում հետևյալ բովանդակությամբ. «Վ. Դավթյանը հրաժարվեց ստորագրելուց և ակտի մեկ օրինակը ստանալուց 16.12.2016»:

- Ա/Ձ Վարազդատ Դավթյանը 10.02.2017թ.-ին Ստուգման ակտի դեմ գանգատ է ներկայացրել Գանգատարկման հանձնաժողով:

- Գանգատարկման հանձնաժողովը 07.03.2017թ. կայացրել է թիվ 11/5 որոշումը, որով գանգատը մերժվել է, իսկ ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ 16.12.2016թ. թիվ 2131628 ակտը՝ թողնվել անփոփոխ: Որոշմամբ մասնավորապես նշվել է. «...Ակտի 1-ին կետում հիշատակված անձանց կողմից (թվով 5) ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ պետին հասցեագրված դիմումով հայտնել են այն մասին, որ երկար ժամանակ աշխատել են Ա/Ձ Վարազդատ Դավթյանի մոտ առանց համապատասխան ձևակերպումների և աշխատանքային պայմանագրեր կնքելու: Հայտնել են նաև, որ բազմիցս պահանջել են, որպեսզի Ա/Ձ Վարազդատ Դավթյանը իրենց ձևակերպի որպես օրինական աշխատողներ, կնքի աշխատանքային պայմանագրեր և գրանցի աշխատանքային սրաժը, սակայն Ա/Ձ Վարազդատ Դավթյանը մերժել է դիմողների պահանջը՝ պարճառաբանելով, որ իրենց սահմանված կարգով ձևակերպելու դեպքում սրիպված կլինի պետությանը հարկեր վճարել, ինչն իրեն նպատակահարմար չէ:

... Ստուգման ընթացքում Ակտի 1-ին կետում հիշատակված անձինք փվել են գրավոր դիմումներ, որոնցով կրկին անգամ հաստատել են իրենց կողմից համապատասխան ժամանակահատվածներում Ա/Ձ Վարազդատ Դավթյանի մոտ առանց սահմանված կարգով ձևակերպվելու և աշխատանքային պայմանագրեր կնքելու աշխատանքային գործունեություն իրականացնելու հանգամանքը:

Այնուհետև իրականացվող ստուգումը կասեցվել է և նյութերը ուղարկվել են ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման վարչություն:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Ակտի 1-ին կետում հիշատակված անձինք ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման վարչությունում տվել են գրավոր հայտարարություններ, որոնցում հստակ նշել են իրենց կողմից Ա/Ձ Վարազդատ Դավթյանի մոտ առանց սահմանված կարգով ձևակերպելու և աշխատանքային պայմանագրեր կնքելու աշխատանքային գործունեություն իրականացրած լինելու վերաբերյալ՝ նշելով փաստացի աշխատանքային գործունեություն իրականացնելու ժամանակահատվածը, մասնագիտությունը և ստացված աշխատավարձի չափը: Նշված անձանց ստուգվող ժամանակաշրջանում աշխատելու հանգամանքը հիմնավորվում է նաև այն փաստով, որ ստուգումն իրականացնող անձանց նշված ժամանակաշրջանում վարսավիրական գործունեություն իրականացնելու վերաբերյալ դիմումներ են տրվել այն անձանց կողմից, որոնք մինչ օրս շարունակում են մատուցել նույն ծառայությունները:

... Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործում առկա ապացույցները հիմնավորում են ստուգվող ժամանակաշրջանում Ա/Ձ Վարազդատ Դավթյանի կողմից առանց թվով 5 վարձու աշխատողների աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու գործունեություն իրականացնելու հանգամանքը»:

- Թիվ ԵԱՆԴ/3975/02/16 քաղաքացիական գործով (ըստ հայցի Սուսաննա Հարությունյանի ընդդեմ Ա/Ձ Վարազդատ Դավթյանի՝ չվճարված աշխատավարձի և այլ հավասարեցված վճարների բռնագանձման պահանջի մասին) Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 01.02.2017թ. կայացված վճռով քաղաքացիական գործը կարճվել է: Քաղաքացիական գործի կարճման հիմք է հանդիսացել Սուսաննա Հարությունյանի կողմից 13.01.2017թ. դատարան հասցեագրված դիմումն առ այն, որ վերջինս հրաժարվում է հայցից և որ ներկայացված հայցադիմումն ինքը չի ստորագրել և ներկայացրել դատարան, ինչպես նաև հայտարարել է, որ Ա/Ձ Վարազդատ Դավթյանը չէր կարող ունենալ, չի ունեցել և ներկայումս էլ չունի իր հանդեպ որևէ պարտավորություն:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ պետի 19.11.2014թ. թիվ 6103075 հանձնարարագրի հիման վրա 04.12.2014թ.-ից մինչև 05.12.2014թ.-ը Ա/Ձ Վարազդատ Դավթյանի մոտ կատարվել է օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում, որի արդյունքում 05.12.2014թ. կազմվել է թիվ 6103075 ստուգման ակտը,

համաձայն որի՝ «Ա/Ձ Վարազդար Դավթյանը ք. Երևան, Մոլդովական 24/1 շ., 38 հասցեում իրականացնում է վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեություն և 2014թ.-ի դեկտեմբեր ամսվա համար Նոր Նորքի ՀՏ է ներկայացրել արտոնագրային վճար վճարող համարվելու մասին N 1 ձևով սահմանված հայտարարություն թվով 3 (երեք) աշխատատեղի համար, սակայն փաստացի գործունեություն իրականացնում է թվով 4 (չորս) աշխատատեղով: «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի N 8 հավելվածի 9-րդ կետի համաձայն, վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեության համար արտոնագրային վճարի ամսական դրույքաչափը կազմում է 15.000 դրամ և նույն հավելվածի 14-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն կիրառվում է 1.05 գործակից»:

#### **4. Պատճառաբանություններ և եզրահանգումներ.**

Բողոքի և դրա քննարկման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ **բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման** հետևյալ հիմնավորմամբ.

Սույն բողոքի քննության շրջանակներում Հանձնաժողովը գտնում է, որ Գանգատարկման հանձնաժողովը չի ապահովել բողոքի և դրանով ներկայացված փաստական հանգամանքների բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ քննարկումը, չի անդրադարձել ստուգման ակտի ընդունման համար հիմք ծառայած փաստական հանգամանքների արժանահավատությանը, բավարար լինելուն, ինչպես նաև ՀՀ կառավարության 25.07.2013թ. թիվ 1259-Ն որոշմամբ սահմանված պահանջների պահպանմանը՝ ստուգումն իրականացրած անձանց կողմից:

Մասնավորապես, «**Եկամտային հարկի մասին**» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի և (կամ) գրավոր պայմանագրի բացակայության) **փաստը լիազոր մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով արձանագրվելու դեպքում** գործատուն (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցված և արտոնագրային վճար վճարող չհանդիսացող) տվյալ

(արձանագրման) ամսում յուրաքանչյուր չձևակերպված վարձու աշխատողի համար հաշվարկում և վճարում է եկամտային հարկ .....

Ի կատարումն օրենքի վերոհիշյալ պահանջի, **ՀՀ կառավարության 25.07.2013թ. թիվ 1259-Ն որոշման հավելված 1-ի (այսուհետ՝ Հավելված 1) 2-րդ կետի** համաձայն, **աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի բացակայության) փաստն արձանագրվում է հարկ վճարողի (տնտեսավարող սուբյեկտի) մոտ հարկային մարմնի կողմից իրականացվող Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության, պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվարկման ու վճարման ճշտությունը պարզելուն ուղղված ստուգումների, օպերատիվ հետախուզական միջոցառումների, ինչպես նաև հարկային մարմնի կամ լիազորված այլ մարմնի կողմից առանց անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված ստուգումների (սույն կարգի իմաստով՝ ստուգում) շրջանակներում:**

**Սույն կարգի իմաստով՝ աշխատողի աշխատանքի ընդունումը համարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպված, եթե առկա չէ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ կամ գրավոր պայմանագիր:**

**Հավելված 1-ի 3-րդ կետի համաձայն, աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի բացակայության) դեպք (փաստ) է համարվում նաև այն դեպքը, երբ ստուգում իրականացնող անձինք գործատուի մոտ իրականացվող ստուգման շրջանակներում գործատուի մոտ առկա համապատասխան վճարահաշվարկային կամ այլ փաստաթղթերի (մասնավորապես, աշխատաժամանակի հաշվառման տեղեկագրերի) հիման վրա արձանագրում են տվյալ գործատուի մոտ նախկինում փաստացի աշխատանքային հարաբերությունների մեջ եղած վարձու աշխատողի առկայությունը (աշխատողի համար աշխատավարձ և դրան հավասարեցված այլ միջոցներ կամ եկամտային հարկ կամ պարտադիր սոցիալական**

ապահովության վճարներ հաշվարկված լինելու հանգամանքը)՝ **առանց այդ պահին աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի առկայության:**

Վերոհիշյալ նորմերի մեկնաբանությունից հետևում է, որ համապատասխան փաստի, այն է՝ աշխատողի աշխատանքի ընդունումն առանց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր ձևակերպման (այսուհետ՝ Փաստ), ստուգումը կարող է դրսևորվել երկու հնարավոր փաստերի արձանագրմամբ՝

1) երբ ստուգման պահին առկա է աշխատող՝ առանց աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի առկայության,

2) երբ վճարահաշվարկային կամ այլ փաստաթղթերի (մասնավորապես, աշխատաժամանակի հաշվառման տեղեկագրերի) հիման վրա արձանագրում են տվյալ գործատուի մոտ նախկինում փաստացի աշխատանքային հարաբերությունների մեջ եղած վարձու աշխատողի առկայությունը՝ առանց տվյալ պահին աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի առկայության:

Ընդ որում, **Հավելված 1-ի 4-րդ և 5-րդ կետերի** ուսումնասիրությունից հետևում է, որ վերոհիշյալ իրավիճակների տարբերակումը ինքնանպատակ չէ և դրանցից յուրաքանչյուրի մասով ներկայացվում են տարբերակված պահանջներ: Օրինակ, Հավելված 1-ի 5-րդ կետը տարբերակում է արձանագրության մեջ ներառման ենթակա տվյալների բնույթը՝ կախված Հավելված 1-ի 3-րդ կետով սահմանված դեպքերի առկայությունից:

Սույն գործի փաստական հանգամանքների համաձայն, ստուգումն իրականացվել է 22.08.2016թ. թիվ 2131628 հանձնարարագրի հիման վրա՝ 26.08.2016թ.-ից մինչև 05.12.2016թ.-ը, մինչդեռ քաղաքացիներ Իրինա Շիրինյանը, Արման Մնացականյանը, Ալինա Եղիգարյանը, Մարիա Բաղդասարյանը և Լիաննա Հակոբյանը Հարկային տեսչության պետին հասցեագրել են դիմումներ, որոնցով հայտնել և հավաստել են, որ համապատասխանաբար 02.02.2011թ.-ից մինչև 2015թ. նոյեմբեր, 01.08.2012թ.-ից մինչև 11.11.2015թ., 01.09.2011թ.-ից մինչև 2015թ. նոյեմբեր, 14.04.2011թ.-ից մինչև 01.09.2015թ. և 03.07.2012թ.-ից մինչև 11.11.2015թ. աշխատել են Վարազդատ Դավթյան Ա/Ձ-ում առանց համապատասխան ձևակերպումների և աշխատանքային պայմանագրի կնքման: Այսինքն, նշված հայտարարությամբ արդեն իսկ հավաստվել է այն փաստը, որ ստուգում

իրականացնելու պահին նշված անձինք չեն հանդիսացել Բողոք բերած անձի աշխատողները, որպիսի պարագայում նշված ստուգումը պետք է իրականացվեր Հավելված 1-ի 3-րդ կետով սահմանված դեպքի համար նախատեսված առանձնահատկություններով պայմանավորված:

Բացառություն է հանդիսանում միայն Մարիա Բաղդասարյանի լրացուցիչ դիմումը, որով վերջինս հայտնել է, որ 01.09.2015թ. Վարազդատ Դավթյանն իրեն գրանցել է որպես աշխատող և կատարել է համապատասխան ձևակերպում: Ըստ նշված դիմումի, աշխատողը չի ծանուցվել աշխատանքից ազատվելու մասին, վերջնահաշվարկ չի կատարվել և աշխատանքային գրքույկ չի տրվել: Սակայն, նշված հայտարարությունը որևէ էական նշանակություն քննվող դեպքի առնչությամբ չի կարող ունենալ, քանի որ ըստ գործի փաստական հանգամանքների՝ Ա/Ձ Վարազդատ Դավթյանը 11.11.2015թ. հայտարարություն է ներկայացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ Խորհրդային ՀՏ պետ Վ. Սահակյանին, համաձայն որի՝ Վարազդատ Դավթյանը դադարեցնում է վարսավիրական ծառայության գործունեությունը Մոլդովական 24/1-38 հասցե տարածքում: Այսինքն, անկախ Մարիա Բաղդասարյանի աշխատանքային իրավունքների խախտումից՝ վերջինս չէր կարող ստուգման պահին համարվել առանց ձևակերպման աշխատող, քանի որ 2015թ. օգոստոսի 31-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության Քանաքեռ-Զեյթունի զբաղվածության տարածքային կենտրոնի, Ա/Ձ Վարազդատ Դավթյանի՝ որպես գործատուի և Մարիա Բաղդասարյանի՝ որպես շահառուի միջև կնքվել է «Անմրցունակ անձի աշխատավարձը մասնակի փոխհատուցելու մասին» թիվ 04 պայմանագիրը, որի համաձայն, Ա/Ձ Վարազդատ Դավթյանը պարտավորվում է Մարիա Բաղդասարյանին ընդունել աշխատանքի, իսկ տարածքային կենտրոնը պարտավորվում է պայմանագրով սահմանված չափով և ժամկետում գործատուին տրամադրել աշխատավարձի մասնակի փոխհատուցում:

Ավելին, համաձայն վարչական գործում առկա արձանագրության, այն ստուգումն իրականացնող աշխատողների կողմից կազմվել է 05.12.2016թ. ք. Երևան, Գյուրջյան 1/3 հասցեում գտնվող կահույքի արտադրամասում, որն արդեն իսկ բացառում է դիմումատուների կողմից հայտարարված բնույթի աշխատանքի (վարսահարդար, մատնահարդար և այլն) փաստացի կատարումը տվյալ պահին ստուգելու հնարավորությունը:

Նշված մեկնաբանություններից հետևում է, որ ստուգման ակտը պետք է կայացվեր Հավելված 1-ի 3-րդ կետով սահմանված համապատասխան հիմքերի առկայության պարագայում, մասնավորապես՝ երբ ստուգում իրականացնող անձինք գործատուի մոտ իրականացվող ստուգման շրջանակներում հայտնաբերում են գործատուի մոտ առկա համապատասխան վճարահաշվարկային կամ այլ փաստաթղթեր (մասնավորապես՝ աշխատաժամանակի հաշվառման տեղեկագրեր), որոնց հիման վրա արձանագրում են տվյալ գործատուի մոտ նախկինում փաստացի աշխատանքային հարաբերությունների մեջ եղած վարձու աշխատողի առկայությունը (աշխատողի համար աշխատավարձ և դրան հավասարեցված այլ միջոցներ կամ եկամտային հարկ կամ պարտադիր սոցիալական ապահովության վճարներ հաշվարկված լինելու հանգամանքը)՝ առանց այդ պահին աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի առկայության:

Հավելված 1-ի վերոհիշյալ պահանջն ինքնանպատակ չէ և պայմանավորված է հստակ այն տրամաբանությամբ, որ նախկինում վարձու աշխատողի առկայությունը պետք է արձանագրվի որոշակի փաստաթղթերի առկայության պարագայում, որոնց բովանդակությունից համապատասխանաբար հետևում է նախկինում փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայությունը, օրինակ՝ հաստիքացուցակ, աշխատաժամանակի հաշվառման տեղեկագիր, աշխատողի համար աշխատավարձ և դրան հավասարեցված այլ միջոցներ կամ եկամտային հարկ կամ պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվարկներ և այլն:

Մինչդեռ, քննարկվող գործի շրջանակներում Գանգատարկման հանձնաժողովն անտեսել է այն հանգամանքը, որ Բողոք բերած անձին մեղսագրված խախտումն ամբողջությամբ հիմնված է միայն համապատասխան անձանց հայտարարությունների վրա, որոնց արժանահավատությունը ևս բավարար գնահատման չի արժանացել: Մասնավորապես՝ հարկային մարմնին դիմում ներկայացրած անձանցից է հանդիսացել նաև Սուսաննա Հարությունյանը, ով թիվ ԵԱՆԴ/3975/02/16 քաղաքացիական գործով Ա/Ձ Վարազդատ Դավթյանից պահանջել է չվճարված աշխատավարձ և այլ հավասարեցված վճարներ, սակայն 13.01.2017թ. դատարան հասցեագրված դիմումով հրաժարվել է հայցից և հայտարարել է, որ Ա/Ձ Վարազդատ Դավթյանը չէր կարող ունենալ, չի ունեցել և ներկայումս էլ չունի իր հանդեպ որևէ պարտավորություն:



Դիմումատուներից է հանդիսանում Իրինա Շիրինյանը, ով ըստ գործի փաստական հանգամանքների Ա/Ձ Վարազդատ Դավթյանի նախկին կնոջ՝ Գայանե Ոսկանյանի հետ 01.12.2015թ.-ին կնքել է աշխատանքային պայմանագիր և հանդիսացել է վերջինիս աշխատակիցը, մինչդեռ Վարազդատ Դավթյանի և Գայանե Ոսկանյանի միջև ոչ բարյացակամ հարաբերությունները հաստատված են գործում առկա Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչի 04.03.2016թ. որոշմամբ, որով կարճվել է թիվ 17150116 քրեական գործով վարույթը՝ հարուցված Գայանե Ոսկանյանի հաղորդման հիման վրա այն մասին, որ իր նախկին ամուսին Վարազդատ Դավթյանը 2015թ. հոկտեմբեր ամսից սպառնացել է սպանել իրեն, իսկ 2015թ. դեկտեմբերի 16-ից այցելել է իր՝ Նոր Նորքի 2-րդ զանգվածի Մոլդովական փողոցի 24/1-38 հասցեում գեղեցկության սրահ ու կրկին տվել սպանության սպառնալիքներ: Նշված հանգամանքների լույսի ներքո Իրինա Շիրինյանի կողմից կատարված հայտարարության արժանահավատությունը վիճահարույց է:

Այն փաստը, որ ստուգման ակտը հիմնված է միայն դիմումատուների հայտարարությունների վրա և որևէ այլ ապացույց առկա չէ, որպիսի հանգամանքը պատշաճ գնահատման չի արժանացել Գանգատարկման հանձնաժողովի կողմից, բխում է անմիջականորեն գործում առկա ստուգումն իրականացրած անձանց կողմից 05.12.2016թ. կազմված արձանագրության բովանդակությունից, որի «ստուգվող ժամանակաշրջանում նախկին աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստն արձանագրելու հանգամանքների նկարագրությունը» վերտառությամբ մասում կատարված է գրառում հետևյալ բովանդակությամբ. «Ա/Ձ Վ. Դավթյանի մոտ նախկինում աշխատած թվով 5 (հինգ) վարձու աշխատողների գրավոր հայտարարությունը»:

Հավելված 1-ի 5-րդ կետի համաձայն, **Արձանագրության մեջ պարտադիր նշվում են սույն կարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ցանկում ընդգրկված անձի (անձանց) անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, նրա (նրանց) կողմից կատարվող աշխատանքային պարտականությունների բնույթը, իսկ սույն կարգի 3-րդ կետով նախատեսված դեպքերում արձանագրության մեջ նշվում են նաև այն հանգամանքները, որոնցով հիմնավորվում է գործատուի կողմից ստուգվող ժամանակաշրջանում նախկինում աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու**

(այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի բացակայության) **փաստը**:

Ինչպես արդեն նշվեց, արձանագրության մեջ բացի հայտարարությունից որևէ այլ հանգամանքների նկարագրություն առկա չէ, որպիսի պարագայում Հանձնաժողովը գտնում է, որ առկա չեն եղել բավարար փաստական հիմքեր՝ ստուգման ակտով սահմանված խախտումը արձանագրելու համար:

Անդրադառնալով Գանգատարկման հանձնաժողովի կողմից 07.03.2017թ. թիվ 11/5 որոշման մեջ արտահայտած դիրքորոշմանն առ այն, որ նշված անձանց ստուգվող ժամանակաշրջանում աշխատելու հանգամանքը հիմնավորվում է նաև այն փաստով, որ ստուգումն իրականացնող անձանց նշված ժամանակաշրջանում վարսավիրական գործունեություն իրականացնելու վերաբերյալ դիմումներ են տրվել այն անձանց կողմից, որոնք մինչ օրս շարունակում են մատուցել նույն ծառայությունները, Հանձնաժողովը գտնում է, որ այն որևէ կերպ չի բացառում կամ մեղմում ստուգման ակտի հիմնավորվածության և Հավելված 1-ի 3-րդ կետով սահմանված պահանջների պահպանման վերաբերյալ Հանձնաժողովի՝ վերը շարադրված եզրահանգումները:

Հանձնաժողովը գտնում է, որ Գանգատարկման հանձնաժողովի կողմից չի իրականացվել ներկայացված բողոքի բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ քննություն՝ խախտելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջը, մասնավորապես՝ Գանգատարկման հանձնաժողովն ըստ էության չի անդրադարձել Բողոք բերած անձի կողմից ներկայացված փաստարկներին և ապացույցներին:

Արդյունքում, Գանգատարկման հանձնաժողովի կողմից խախտվել է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի՝ գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, որում պետք է նշվեն համապատասխան որոշում ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն, անվավեր է առոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն, վարչական ակտի փոփոխման կամ բեկանման հիմք են հանդիսանում նույն օրենքի 63-64-րդ հոդվածներով սահմանված հիմքերը:

*Վերոգրյալի արդյունքում՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 4-րդ մասի, **1-ին մասի «ա» կետի պահանջներով՝***

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ա/Ձ Վարազդատ Դավթյանի 07.04.2017թ.-ի վարչական բողոքը՝ **բավարարել.** անվավեր ճանաչել Գանգատարկման հանձնաժողովի 07.03.2017թ. թիվ 11/5 որոշումը և կայացնել նոր վարչական ակտ՝ հետևյալ բովանդակությամբ. «Անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի հարկային տեսչության 16.12.2016թ. թիվ 2131628 ստուգման ակտը»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ակտի ընդունման մասին վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ